կում զբաղուած էր գաղթականների տեղաւորման ու հոգատարութեան խնդիրներով։

Կարճիկեանի մահով ո՛չ միայն Հայաստանն էր զրկւում իր ամենախոշոր պետական մի գործչից, այլ և բովանդակ Կովկասը։ Նա եղաւ վերջին տասնամեակի կովկասեան իրականութեան այն սակաւաթիւ դէմքերից մէկը, որոնք կեանքի ամենախռովայոյզ օրերին անդամ կարողացան պահել մաքի պայծառութիւնն ու հոգեկան հաւասարակշռութիւնը։ Արամից յետոյ, առաջինն էր՝ կոչուած կերտելու Հայաստանի պետական շէնքը։ Եւ մոլեռանդի կոյր զնդակը խլեց հայ ժողովրդից այդ թանգագին կեանքը։ Հասկանալի է, թէ ինչո՞ւ նրա մահը ցնցեց ամենքին։ Կարճիկեանի յուղարկաւորութիւնը իսկական համաժողովրդական սուգ էր*)։

Սպանիչը վրէժ էր լուծում Կարճիկեանից, իբրև մէկից, որ իր վարած քաղաքականութեամբ դէպի կործանում էր առաջնորդել հայ ժողովրդին, որ գործիք էր ծառայել վրացի ազգայնականների ձեռքին, որ պատճառ էր եղել Կարսի անկման ու յետադայ աղէտներին։ Պատմութեանն է մնում պարզել, թէ որքա՞ն արդար են այդ մեղադրանքները և արդեօք Կարճիկեանին վերագրուող յանցանքների համար աւելի պատասխանատու չէ՞ն այն մարդիկ, որոնց ուղղակի կամ անուղղակի ներշնչումով ոճիր էր գործում դժբախտ Եգորը։

*

Կօալիցիոն կառավարութիւնը գործի անցաւ այն պահուն, երբ արդէն դաշնակիցների յաղթութիւնը փաստ էր, և հայ ժողովրդի առջև բացւում էին նոր հորիզոններ։ Նոյեմբ. 17-ին Բաղու էր մտել անգլիական մի զօրամաս զօր. Թոմսընի գլխաւորութեամբ։ Նոյեմբ. 20-ին վերադարձել էին հաշտարար պատուիրակութեան անդամները՝ Ա.Հարոնեանը, Խատիսեանը, Պապաջանեանը, որոնք Պոլսից դուրս էին եկել նոյեմբ.1-ին՝ բերելով իրենց հետ Մուդրոսի զինադադարի և արևմտեան ճակատի դէպքերի մանրամասնութիւնները։ Նոյն օրերին, Թեհրանից՝ Ս.Արարատեանից, Ներսէս արքեպ. Մելիք-Թանգեանի միջոցով, ստացւեց մի հեռագիր, որ չափազանց վարդագոյն հեռանկարներ էր բանում հայ ժողովրդի առջև. Պօղոս Նուպարը աւետում էր դաշնակիցների յաղթութեան լուրը և այն ոգևորութիւնը, որ տիրում էր հայկական բոլոր խաւերի մէջ։

Շուտով բացւելու էր Խաղաղութեան Վեհաժողովը։ Պէտք էր շտապել պատուիրակութիւն ուղարկել Եւրոպա՝ ներկայացնելու համար հայկական պահանջները։ Հայ. Խորհուրդը մի քանի դռնփակ նիստերում քննեց պատուիրակութեան տալիք հրահանգները։ Մասնաւորապէս լուրջ ու բազմակողմանի քննութեան առնուեց Հայաստանի սահմանների խնդիրը։ Կար մի քանի տեսակէտ. վարչապետ Քաջազնունին գոհանում էր համեստ սահմաններով՝ համաձայնւելով ծովային ելք էլ չունենալ։ Ժողովրդականները՝ Ս.Ցարու-

*) 1919թ. յուն. 17-ին Հայ. Խորհուրդը յատկացրեց 75,000ռ. Խ. Կարճիկեանի ընտանիքին նպաստ և զաւակներին կրթութիւն տալու նպատակով։